Հ. Հովակիմյանի պատանեկան գավաթ՝
գործնական շախմատի մրցաշար

Երևան, 2026 թ. հոկտեմբերի 2-4-ը

Մրցաշարի գլխավոր հովանավոր՝ Հ.Հովակիմյան

Մրցաշարի կազմակերպիչ՝ Շախմատի հայկական ասոցիացիա

Անցկացման վայրը՝ Տ. Պետրոսյանի անվան շախմատի տուն-մարզադպրոց

Մրցաշարին մասնակցում են 4 պատանեկան թիմեր՝ յուրաքանչյուր թիմում 5 անդամ:

Յուրաքանչյուր թիմ պետք է ունենա համազգեստ,՝ 2 զույգ T-shirt՝ սպիտակ և մուգ գույնի (կապույտ, կանաչ, կարմիր և այլն) համապատասխանաբար սև և սպիտակ խաղաքարերով խաղալու համար:

<u>Խաղացանկ.</u>

2 հոկտեմբերի՝ առաջին կիսաեզրափակիչ – 2 պարտիա

3 հոկտեմբերի՝ երկրորդ կիսաեզրափակիչ - 2 պարտիա

4 հոկտեմբերի՝ եզրափակիչ - 2 պարտիա

Կիսաեզրափակիչներում թիմերը բաշխվում են թիմային ընդհանուր վարկանիշի համաձայն. այնպես, որ երկու ամենաբարձր վարկանիշ ունեցող թիմերը չհանդիպեն միմյանց: Զույգերը կազմվում են 1-4 և 3-2 սկզբունքով:

<u>Գործնական շախմատի կանոնները.</u>

Մեկ մրցամարտն անցկացվում է առավելագույնը 3 ցուցադրական տախտակների վրա՝ ընդհանուր 8 խաղային վարկանիշով:

Յուրաքանչյուր թիմին տրվում է 1-ական ժամ հիմնական ժամանակի համար առանց հավելումի, ապա լրացուցիչ 5-ական րոպե պարտիայի ավարտին. քայլի համար 2-ական վայրկյան հավելումով: Այդ դեպքում հաշվի է առնվում նաև հիմնական ժամանակահատվածում տնտեսած ժամանակը:

Յուրաքանչյուր մրցամարտում հաղթանակի համար տրվում է 2 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1 միավոր:

- Եթե այդ թիմերի անձնական հանդիպման 2 խաղերի (սպիտակներով և սևերով) արդյունքում գրանցվում է ոչ-ոքի, ապա հաղթողը որոշվում է անձնական հանդիպման 2 խաղերի միավորների տարբերությամբ (ինչպես ֆուտբոլում՝ խփած և բաց թողած գոլերի տարբերությամբ):
- Եթե եզրափակչում հավասարությունը կրկին պահպանվում է, ապա հաշվվում է ամբողջ մրցաշարի (կիսաեզրափակիչ և եզրափակիչ) միավորների քանակը:
- Եթե հավասարությունը կրկին պահպանվում է, ապա մեկ խաղատախտակի վրա խաղացվում է 2 կայծակնային (յուրաքանչյուր թիմի համար 5-ական րոպե՝ յուրաքանչյուր քայլի համար 2-ական վայրկյան հավելումով)՝ թիմային քննարկման հնարավորությամբ (ինչպես գործնական շախմատի խաղի ավարտին):
- Եվ, վերջապես, եթե հավասարությունը կյրկին պահպանվում է, ապա խաղացվում է 1 սովորական Արմագեդոն պարտիա յուրաքանչյուր թիմի մեկական անդամի մասնակցությամբ, սպիակներին 5 րոպե, սևերին՝ 4 րոպե ժամակարգով, որտեղ ոչ-ոքիի դեպքում հաղթող է ճանաչվում սևերով խաղացող թիմը:

Մրցաշարի գլխավոր հովանավոր՝ Հ. Հովակիմյան

Մրցանակային հիմնադրամ՝ 225000 ՀՀ դրամ

Մրցաշարի հաղթողը ստանում է Գ. Հովակիմյանի անվան գործնական շախմատի պատանեկան գավաթը՝

1-ին տեղ	*100.000 դրամ*
2-րդ տեղ	*75.000 դրամ*
3-րդ տեղ	*25.000 դրամ*
4-րդ տեղ	*25.000 դրամ*

- *Հաղթած թիմը կպարգևատրվի գավաթով:*
- *Բոլոր 4 թիմերը ստանում են դիպլոմներ՝ մրցաշարում իրենց զբաղեցրած տեղին համապատասխան:*
- *Բոլոր մասնակիցներին որպես հուշանվեր կտրվի Գ. Հովակիմյանի «Зрелишные шахматы» գրքի մեկական օրինակ:*
- *Մարզիչներն ու մրցաշարի կազմակերպիչները կստանան մասնակցության դիպլոմներ:*

<u>Մուտքավճարներ</u>

Մրցաշարի մասնակից-թիմերը պետք է գրանցվեն նախապես՝ կատարելով փոխանցում (30.000 ՀՀ դրամի չափով) հետևյալ բանկային հաշվին՝

«Շախմատի հայկական ասոցիացիա» Հ/Կ

ք. Երևան Խանջյան 50

“ԱՐԱՐԱՏ” ԲանկԲԲԸ

Հ/Հ 1510006712982908

Նպատակը դաշտում նշել՝գործնական շախմատ, թիմի անունը, հեռախոսահամար: